

ձնասպանութիւնն են գործում՝ թաղում են գեանի տակ այն գանձը, որի շահեցնելը մեր կեանքի միակ խորհուրդը պէտք է լինի—զեպի մեր անձն ունեցած սրբոզան պարտականութիւնները կատարելու, բայց և մեր ընկերին օգնելու: Ճշմարիտ եղբայրասիրտ թեամբ նորա բարոյական զարգացման նպաստելու անհրաժեշտ պայմանը: Որպէս զի մենք շրջապատողներին վերայ բարերար ազդեցութիւն ունենանք, նոցա հոգեւոր և բարոյական զարգացմանը նըպաստենք՝ հարկաւոր է որ նախ ինքներս հոգեպէս և բարոյապէս ճոխացած լինինք: Այն անձը որի կուրծքը լի է երկնքի համար պատրաստած հոգեւոր գանձերով և որի ձակաթին առաքինութեան դրոշմն է փայլում՝ առանց իւր կամքի իսկ բարոյական և երկնային կեանքի հրապօրը սփռում է իւր շուրջ և իւրաքանչիւր հանդիպողի համար բարերար և դաստիարակ հանդիսանում: մինչդեռ բարոյապէս ազգատը որչափ և ձգտումն ունենայ ու հետամուտ լինի ամէնքին բարիք անելու՝ ամբողջ մարդկութիւնը բողբուռեղնելու: նորա ջանքն ապարդիւն պէտք է անցնի, որովհետև ուրիշին տալ կարող ենք մենք այն միայն ինչ որ ինքներս ունինք:

Աշխատենք ուրեմն ունենալ, ոչ մի ջանք և զոհողութիւն չլինայինք այնպիսի գանձեր ժողովելու համար որ ոչ ցեց և ոչ ուախձ ապականեն և ոչ զողք ական հասանեն և զողանան» որպէս զի երբէք արտաքին օգնութեան կարօտ չլինինք և կարողանանք միշտ կատարել մեր սիրոյ պարտքը զեպի ընկերր, որպէս զի նաև այն ժամանակ, երբ ամէն ինչ կիլեն մեզանից, երբ մեր սեփական աչքն ու ձեռքն անգամ մերն անուանել և ըստ մեր հաճոյից գործ գնել չենք կարող՝ ունենանք այնուամենայնիւ մի բարիք, մի գանձ, որ ոչ ոք մեզանից չպէտք է խլի, որը շարակած պիտ համարձակուենք զեպի երկնքի դուռը դիմելու և անօգտա երանութեան կեանքը գնելու:



Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն

ԵԻ

ԱՂ.ՔԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ,

Պ.

ԱՂ.ՔԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԵՒՈՊԱՅՈՒՄ.

I.

Ներքին առաւելումներն և արտաքին հարկերի փոփոխությունները:

(Շարունակորիմ և զեպի) *

II.

ԱՂ.ՔԱՏՆԵՐԻ ԱՐԴԻ ԽՆԱՄԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ.

Ներկայ դարու քրիստոնեական բարեգործութեան և հաստատութիւններին մասին խօսելուց յետոյ՝ այն հատուածի մէջ աշխատենք աղքատների բուն արդի խնամատարութեան մասին մի համառօտ գաղափար տալ:

Աղքատների խնամատարութիւնն այժմ երեք սիւսեմի է բաժանուում. պետական, անձնական կամ ազատակամ և եկեղեցական: Պետական խնամատարութիւնը ծագել է քրիստոնեական եկեղեցու ազդեցութեամբ, նախկին յօդուածներում ևս մենք մասնանիչ ենք արել այդ կէտի վերայ: Աղքատութեան շափազանց զարգացման առաջն աննելու համար պետութիւնն օրէնքներ և այնպիսի հաստատութիւններ է հիմնում որ մասնաւոր անձանց կարողութիւնից բարձր է: Մա ձգտում է աղքատների համար եղած օգնութեան գործը այնպէս կազմակերպել, որ ընդհանրութեան վիճակն ևս զորանով թիթեանայ: Սակայն այս սկզբունքները ինքնբարեկրան համակրելի լինելով հանդերձ՝ վտանգաւոր կողմերից ազատ չեն: Պետութիւնն օրէնքի միջոցաւ հարկադրելով աղքատներին օգնել, գործնով իրաւունք է տալիս աղքատին օգնութիւն պահանջելու: Այդ է պատճառը, որ նշանաւոր պետական մարդիկ շատ հիմնաւոր առարկութիւններ են արել աղքատների խնամատարութեան գործը պետական զարձնելու գէմ: Երբ պետութիւնը օրէնքով ապահովում է աղքատների վիճակը, թողիկի և ձերերի համար ապաստանա-

* Տես Արարտ 1898 թ. հասար է. եր. 288:

բաններ է հիմնում: ասում էին նոքա: զորանով նա ինքը խրախուսում է աղքատութիւնը: Կարօտաւը յոյս ունենալով, ինչ էլ լինի, օրէնքի զօրութեամբ օգնութիւն ստանալ անհոգ է գտնում զէպի իւր ապագան: Այդպիսով վտանգի է ենթարկում աղքատի արժանապատուութեան զգացմունքը որով սովորում է նա առանց աշխատելու վայելել հասարակութեան վաստակը: *

Բացատրելու կարիք չկայ որ այս առարկութիւնները բոլորովին անհիմն չեն վտանգը մեծ է մանուսնդ այն պատճառով որ պետական խնամատարութեան մէջ նիւթական օժանդակութեան հետ կապուած չէ և բարոյական գաստխարակութեան գործը: որ ինչպէս տեսանք: յատուկ է քրիստոնէական խնամատարութեան: Այդ է պատճառը որ Անգլիայում պետական օրէնքը այնքան է զժուարացրել աղքատի օժանդակութիւն ստանալը որ նա միայն ծայրահեղ զէպքում սովից ազատուելու համար է օգնութիւն խնդրում: Այդպէս են օրինակ աղքատների համար հիմնուած գործատունները, աղքատը լու է համարում ամենապառն նեղութիւններ կրել, քան ժամանակաւորապէս այդպիսի հանատութիւններ մանել: Սակայն այդ զժուարութիւններն էլ առիթ են լինում որ աղքատը հեամուտ է լինում երեսի քրաինքով իւր հոյը վաստակել: Պետական խնամատարութեան լաւագոյն սխտեմը ԷլրերՖելզի սխտեմն է, որ այսպէս է կոչում այն քաղաքի անունով որ առաջին անգամ գործադրուեցաւ այդ սխտեմը: ԷլրերՖելզի սխտեմը շատ մօտ է քրիստոնէականին և նորա հիմնադիրները բարեպաշտ անձնաւորութիւններ էին: Հեակեալ սկզբունքների վերայ է հաստատուած այդ սխտեմը: Ա) խնամատարները անպայման պարտաւորուած էին քննել և վերատուգել աղքատների վիճակը և անձամբ հասցնել նպաստները առանց պետական աստիճանաւոր պաշտօնեայի: Բ) Աղքատախնամները պէտք է որոշէին նպատի որքանութիւնը և նորա գործադրութիւնը առանց պետական վերատուգող և սկզբունքների իրագործման

վերայ հսկող կենդրոնական վարչութեան: Գ) Աղքատախնամները ըստ կարելոյն փոքր շրջաններ պէտք է ընտրէին իրենց գործունէութեան համար՝ անհասական խնամքի հնարաւորութիւն ունենալու նպատակով: *

Աղքատների խնամատարութեան միւս տեսակը ազատական է կամ անձնականը: Իւրաքանչիւր քրիստոնեայի իրաւունքն է և պարտքը օգնութեան հասնել, ուր օգնելու կարիք կայ: Անհատական օգնութիւնը քրիստոնեայի պարտքի և զգացմունքի պտուղ է: Որքան և ցանկալի է, որ քրիստոնեան զիտակից լինի պարտքին և պատրաստ օգնութեան սակայն չպէտք է ուրանալ թէ ոչ մի խնամատարութիւն այնպիսի թոյլ կողմեր չունի ինչպէս ազատական կամ անհատական խնամատարութիւնը: Որքան զոհարելութիւններ սուրբ սրտից բղխած լուսաներ ի զուր են կորչում, կամ մինչև իսկ անզիտակցաբար ամենախայտառակ ախտեր խրախուսում: Պատահում է, որ ծոյլ և արեւցող աղքատը անհատներից ստացած ողորմութիւնը դիմեաուն է տանում, իսկ նորա ընտանիքը հոյի կարօտ է: Սորա պատճառն այն է, որ անհատը ժամանակ և հնարաւորութիւն չունի ստուգելու թէ արդեօք իւր առած ողորմութիւնը ճշմարիտ կարօտեայի ձեռք ընկաւ թէ մի ստախօս անպիտանիւ Բոյց այս վտանգաւոր կողմերը պատճառաբանութեան հիմք չեն կարող լինիլ ողորմածութիւնից խուսափելու, այլ ըստ կարելոյն հեամուտ պէտք է լինել, որ սրտից բղխած նուէրները ցանկալի նպատակների համար գործադրուին: Ազատական խնամատարութեան մէջ յաճախ պատահող այս չարիքների առաջն առնելու համար կազմուել են բազմութիւ և բազմատեսակ ընկերութիւններ: Մասնաւոր նուիրատուն իւր նպատար ընկերութեան է տալիս և ոչ անհատ աղքատին: որպէս զի ընկերութիւնը իւր պաշտօնականների ձեռքով աւելի բանաւոր կերպով գործադրել կարողանայ, քան մասնաւոր նուիրատուն անկ կարող էր: Եթէ կան ստախօս սրիկաներ, որ մութացկանութիւնը իրենց համար արհեստ

* R. E. 2 I. եր. 649. Schöfer. եր. 192.

* R. E. 2 I. եր. 652. Ullhorn, III. եր. 454.

են դարձրել քիչ չեն և այնպիսի պատուաւոր և արհիւ ընտանիքներս որոնք լաւ են համարում ամենազաւն նեղութիւններ յանձն առնել քան սորան նորան դիմել: Մենք գէպքեր զիտենք, որ մարդիկ սովից մեւել են կամ ինքնասպանութիւն գործել: Ամօթխած աղքատների հոգատար ընկերութիւնների նըպատակն է որոնել այդպիսիներին և օգնութիւն հասցնել:

Մի ուրիշ տեսակ ընկերութիւն կայ մուրացկանութեան դէմ: Ինքնըստինքեան մուրացկանութիւնը մարդկային արժանապատուութիւնը մեղցնող մի երեւոյթ է. իսկ միւս կողմից շատ աներեւաններ և սրբիկներ ի շարն են գործ դնում ողորմութիւնը և մուրացկանութեամբ ապրում անձամբ աշխատելու տեղ: Այս շարիքներին մասնակից չլինելու համար իւրաքանչիւր ընտանիք տարեկան որոշ նուէր է տալիս ընկերութեան և անգամ գրուելով՝ գրան վերայ կայքընում է ընկերութեան անունը: Մուրացկանը անսնելով այդ տախտակը, հեռանում է լուկեայն լաւ իմանալով որ ոչ միայն կոպէկ չէ ստանալու, այլ և կարող է ուստիկանութեան ձեռքն ընկնել և թէ, որ և է, անվայել խօսք արտասանել, տանտիրոջ մերժման համար: Տարեկան նուէրները ընկերութիւնը ինքն է բաժանում ճշմարիտ չքաւորներին:—Այս խօսքերը մեր ընթերցողներին հասկանալի անելու համար պէտք է նկատենք, որ Եւրոպական շատ պետութիւնների մէջ օրէնքով արգելուած է մուրացկանութիւնը: Ոչ մի աշխատելու ընդունակ մարդ իրաւունք չունի մուրացկանութիւն անելու, մուրացկանութեան վիտական են ստանում միմիայն խեղանկամները կամ աշխատելու անընդունակները: Անգամալըծներն ու նման թշուառները քաղաքային կամ քրիստոնէական հաստատութիւնների մէջ են պատասխարում: Աւելացնենք նաեւ որ մուրացկանները բոլորովին ձրի չեն նուէր ստանում: Երբքս կամ նուազում են կամ երգում կամ լուցիկ են վաճառում փողոցի մի անկիւնում:

Կան երրորդ տեսակ ընկերութիւններ՝ փշացած կամ անտէր երեխաների կրթութիւնը հոգացող: Երեխաների փշանալը մանաւանդ մեծ քաղաքներում կապ ունի անտեսական վատթար

փիճակի հետ: Երեխաների աղքատ ծնողները գործարան գնալով և առաւօտից մինչև երեկոյ այնտեղ մնալով՝ այլ ևս ժամանակ չունին իրենց զաւակներին դաստիարակութեամբ դրողուելու, ուստի և երեխաները մնում են անտէր փողոցում: Այս ընկերութիւնների նպատակն է ծնողների բացակայութեան ժամանակ երեխաներին դրողեցնել, կարգացնել և այլն: Իսկ եթէ երեխաներն արդէն փշացել են, առնել ծնողներից և «փրկութեան անկ» կոչուած առանձին հաստատութիւններում կրթել: Այս գործը զարգացած է յատկապէս եկեղեցական շրջաններում:

Ահա այսպիսի և նման ընկերութիւններ աշխատում են իրենց հետ կապել այն անձնաւորութիւններին, որոնք օգնելու պատրաստակամութիւն ունին: Բայց նոյն իսկ այսպիսի ընկերութիւնները ճշգրտութեամբ և նպատակայարմար կերպով իրենց գործը կատարել չեն կարող, եթէ միացած չլինեն քաղաքային և եկեղեցական ինստիտուտ փարչութիւնների հետ: Այդ միութեամբ մէկի պակասը միւսն է լրացնում: Համամատար և եկեղեցական ինստիտուտութիւնը ամէնից լաւ է կազմակերպուած. ինստիտուտ սակաւազները առանձին կրթութիւն են ստանում յատկապէս այդ գործի համար, ուստի և աւելի լաւ կարող են գործադրել ստացած նպատակները, քան մուսները: Բողոքական եկեղեցու մէջ աղքատների ինստիտուտութիւնը շատ է յիշեցնում նախկին եկեղեցու մէջ եղած կազմակերպութիւնը: Եկեղեցական ինստիտուտութիւնն այժմ երկու մասի է բաժանուում: Համայնական կամ բուն եկեղեցական և ներքին միտնի կամ առաքելութեան ինստիտուտութիւն: Առաջինի ղեկավարներն են համայնքի քահանաները և այսպէս կոչուած «երկեցները» այսինքն համայնքից ընտրուած աշխարհական ներկայացուցիչները: Իսկ երկրորդինը՝ ներքին առաքելութեան կենդրոնական փարչութիւնը, իւր կառավարիչ պատասխաններով:

Նախ մի քանի խօսք համայնական ինստիտուտութեան մասին: Համայնական ինստիտուտութեան վարչութեան զուտը քահանան է: Սորան օգնում են երկու կամ աւելի սարկիսապու հիներ համայնքի մեծութեան և

կարիքներին նայելով Սարկաւազ կամ սարկաւազու հի չպէտք է մեր եկեղեցու մէջ գործածած իմաստով հասկանալ այլ պարզ՝ աղքատների խնամատարներ կամ հիւանդագահներ: Համայնական խնամատարութեան կեդրոն զլիաւորապէս հիւանդների խնամատարութիւնն է կազմում: Սարկաւազու հին անդեկութիւն ստանալով հիւանդի մասին՝ այցելում է նորան: Այնուհետեւ նա հիւանդագահի պաշտօն է կատարում: Ընտանիքը աղքատ է, նորա համար կաթ, ձու, կերակուր է հոգում: Ինչ որ բժշկը կարգադրել է, նրա աղքատ ընտանիքի հիւանդը մայրն է, սարկաւազու հին ամառիկութիւնն է անում: Խնամում փոքրահասակ երեխաներին, մաքրում է ասնը և այլն: Նիւթական օժանդակութիւն տալիս են կամ հարուստ անհասները կամ ընկերութիւնները՝ յատկապէս կանանց ընկերութիւնները, որոնց անգամ ակիկները անկարող են բարեխղճ կերպով կատարել այն ամեն ծառայութիւնները, ինչ որ կատարում է հիւանդագահութեան համար գաստիարակում սարկաւազու հին: Սակայն ընկերութեան բոլոր անդամուհիները սիրա և ցանկութիւն չունին թշուառ ընտանիքներն այցելել, նոցա կեղտոտ բնակութիւնները տեսնել: Իսկ լաւադոյն անգամներն էլ այցելելով՝ հնարաւորութիւն չունին այն բոլոր ծառայութիւնները կատարել, որ սարկաւազու հին է կատարում: Սորա վերայ աւելացնենք նաև այն հանգամանքը, որ տարափոխիկ հիւանդութիւնների ժամանակ ոչ մի ակիկն իւր զուակներին մտանալ չէ կարող: Այս հանգամանքներից ստիպուած կանանց ընկերութիւնները սիրով միանում են եկեղեցական խնամատարութեան վարչութեան՝ այսինքն պատարի և համայնքի ներկայացուցիչների, մեր մտքով երեցփոխի՝ հետ Շատ անգամ համայնքի սարկաւազու հիները խնամում են և հարուստ հիւանդներին, որովհետեւ նոքա աւելի բաւ են հասկանում այդ դործը քան անփորձ կանայք: Գորա համար հարկաւ վարչութիւնը նուէր է ստանում աղքատների օգտին գործադրելու: Տիրող ըսկրքունք է սակայն որ հարուստ հիւանդների խնամատարութիւնը ի վնաս աղքատների չպէտք է լինի:

Համայնական խնամատարութեան մի կրկնորդ կէտը մանուկների դպրոցն է: Վարժուհին համայնքի սարկաւազու հինն է: Սակայն դպրոց անունը չպէտք է շփոթել սովորական դաղափարի հետ: Այս դպրոցի իսկական նըպատակը ուսում տալը չէ, դորա համար ծխական դպրոցներ կան, ուր յաճախելը ամէնքի համար պետական օրէնքով պարտադիր է: Այս տեսակ դպրոցների նպատակն է օգնել աղքատ ընտանիքների զուակներին կրթութեան գործում: Գործարաններում կամ ուրիշ անդեր գրադուած ծնողաց զուակներին դպրոցական ժամանակից դուրս փողոցներում չձգելու համար՝ համայնքի քահանան սարկաւազու հու միջոցաւ մասամբ զբաղեցնում է մասամբ սնունդ հոգում: Սարկաւազու հու խնամքին են յանձնուած նաև աւելի փոքրահասակները, որոնք պետ ևս դպրոց չեն յաճախում: Երբեմն մինչև իսկ ծծկերները, երբ ընտանիքի կարիքը ստիպում է, որ մայրն անպատճառ դուրսն աշխատէ:

Աղքատների իսկական խնամատարութիւնը այս երկու կէտերի հետ է շարկապում: Սարկաւազու հիները ծանօթ են համայնքի բոլոր ընտանիքներին՝ նոքա գիտեն, որ ընտանիքը կարօտ է օգնութեան: Սոքա մանրամասն անդեկութիւններ, ունին աղքատ ընտանիքների բարոյական և անասական կացութեան մասին: Այս ծանօթութիւնը աղքատների բնաւոր խնամատարութեան ամենակական կէտն է: Շատ ընտանիքներ աղքատ են ոչ այն պատճառով որ նոցա եկամուտը ձշմարիտ քիչ է, այլ որ անասութիւնից բան չեն հասկանում կամ հոյրը անհոգ է գէպի իւր ընտանիքը՝ ստացածը իւր ընկերների և բարեկամների հետ է, ծախսում ասանց ուշադրութիւն դարձնելու իւր ընտանիքի խեղճ կացութեան վերայ: Սարկաւազու հիներն ուսումնասիրութեան նիւթ է ոչ միայն ընտանիքի անասական վիճակը, այլ և բարոյականը՝ արդեօք տուած օգնութիւնը իսկական կարիքների համար է գործադրուած թէ բոլորովին անպատակ շարժութեան համար: Նրա այրը արբեցող է, օրինակ, և կինը աշաղուրջ, հաստարիմ իւր մայրական պարտաւորութիւններին, օգնութիւնը կինն է ստանում:

շատ անգամ ծածուկ որպէս զի այրը բռնութեամբ չյափշտակէ արեցութեան համար դործադրելու: Սարկաւազուհին ընտանիք չէ մտնում որպէս հսկող կամ որպէս ուսուցիչ, որ չվիրտ որևէ ընտանիքի ետտիրութիւնը, այլ որպէս բարեկամուհի՝ յարմարուելով զէպքին և հանգամանքներին: Օգնութիւնը կատարուում է կամ զբանով կամ կերակրի նիւթերով կամ հազուստով: Բայց այս խնամատարութեան ամենահամակերպի կողմը բարոյական դատարարութեան կէտն է: Սարկաւազուհին շատ զոջը կերպով՝ աշխատում է արմատախիչ անել ընտանիքի մէջ եղած բարոյական լծերու թիւնները նոցա մէջ կրօնական զգացմունք և ջերմեանդութիւն և աշխատութեան սէր զարթեցնել, անտեսութիւն կարու ձև սովորեցնել, եթէ չգիտեն: Ծառ բազմակողմանի է համայնական խնամատարութիւնը և անկարելի է մեզ լիակատար նկարագրութիւն տալ այն դործունէութեան որ կատարում է խնամատար սարկաւազուհին. մեր նպատակն էր միայն հութիւնը բացատրել:

Բայց սարկաւազուհին այս դործերը անկախ չէ կատարում: Սա ամենայն օր տեղեկութիւն է տալիս վարչութեան, յատկապէս պատտրինն որ այս գործի գլուխն է: Իւրաքանչիւր ընտանիքի մասին եղած նկատողութիւնները գրուում են նոցա անունով կազմած տեղաբնիկ մէջ, արձանագրում նոյն ընտանիքին բաշխած նպաստները: Սարկաւազուհին իւր հաւաքած տեղեկութիւնների համեմատ զեկուցում տալուց յետոյ՝ պատտրից հրահանգ է ստանում գործելու համար: Հարկաւոր զէպքերում այցելում է ինքը պատտրը, միտիւարում է հիւանդներին, յանգիմանում և խրատում է մտորեալներին: Սարկաւազուհուն գործակցում են շատ անգամ այն ընկերութիւնների տիկիները, որոնք գաշնակցութիւն ունին եկեղեցական խնամատարութեան վարչութեան հետ: Նոքա ևս պարտաւոր են իրենց գործաւնութիւնների համար հաշիւ տալ կամ արձանագրել սուսած նպաստները, որպէս զի վարչութիւնը կատարելապէս տեղեկ լինի գործին կարգադրութիւններ անելու ժամանակ: Եկեղեցական խնամատարութիւնը լաւ կազմակերպուած է

յատկապէս Վկտորիայայում և Հոնոսի երկրներում:

Մենք յիշեցինք, որ քրիստոնէական խնամատարութիւնը երկուսի է բաժանուած: Նոցանից մէկի համայնական խնամատարութեան համառօտ նկարագրութիւնը տոխը, այժմ մի քանի խօսք ևս ներքին առաքելութեան խնամատարութեան մասին որ քաղաքային առաքելութեան (Stadtmission) մի մասն է կազմում:

Աղքատների խնամատարութիւնը կենդրոնացած է մեծ քաղաքներում: Եւր հարստութեան հետ և սովալի լիշուսութիւն է տիրում: Վարչութիւնը հաստատուած է ներքին առաքելութեան սեպհական տան մէջ, որ ընկերութեան տուն (Vereinshaus) է կոչուում: Այստեղ են նոյնպէս և ուրիշ ստուուածահաձոյ ընկերութիւնների ժողովներն ու վարչութիւնները: Գործունէութեան սկզբունքները նոյն են ինչ որ համայնական խնամատարութեան մէջ տեսանք. տարբեր են միայն գործող անձինք և գործունէութեան եղանակը: Այստեղ գլխուոր խնամատարները ոչ թէ սարկաւազուհիներն են, այլ սարկաւազները, թէև հարկաւոր զէպքում նոքա ևս օգնութեան են հասնում: Սարկաւազ կոչում են այն ճեղքայրները, որոնք միայն աղքատների խնամատարութեամբ են զբաղուած: Բազալլ թողելի է բաժանուած. ամենայն օր նոքա այցելութիւններ են կատարում, նպատակներ կամ հազուստ են հասցնում կարօտեալներին: Վարչութեան կարգադրութեան համաձայն կամ էժան բնակարաններ են վարձում այն ընտանիքների համար, որոնք իրանց եկամտով անկարող չեն բնակարանի լիակատար վարձ տալ: Սարկաւազներն են աղքատների և հարուստների աղքատների և վարչութեան միջնորդները: Հարուստն իրեն գիմոյ աղքատին նպաստ տալուց առաջ սարկաւազին կամ նորա վարչութեանն է գիմում՝ խնդրատու թրժանաւորութիւնն ու անարժանաւորութիւնը ստուգելու համար: Ուր սարկաւազուհիների համար անյարմար է ելու մուտ անել այնտեղ սարկաւազներն են օգնութեան հասնում: Նոցա գործունէութիւնը ընդհանուր է և ոչ համայնքների հետ կապուած: Օգնու-

Թիւն ստանում են միայն ճշմարիտ չքաւորները և արժանաւոր աղքատները. սարկաւազը նպաստ տալուց յետոյ՝ վերստուգում է և նորա գործադրութիւնը: Այս կէտը շատ կարեւոր է աղքատների խնամատարութեան գործում որպէս զի ստացած նուէրները իրենց նպատակի համար գործադրուին և ոչ աւելորդ շտալութեան: Այնտեղ աղքատը նուէր ստացած հաղուստի կտորը չի կտրող միզի հետ փոխանակել ինչպէս այժմ մեր մէջ է պատահում: Մոյն սկզբունքներով է կատարւում աղքատների խնամատարութիւնը և և կաթողիկոսների մէջ, բողոքական սարկաւազների և սարկաւազուհիների նման գործունէութիւն ունին և կաթողիկ եկեղեցու ողորմածութեան քայրերն ու եղբայրները: Բայց ինչպէս նախնի եկեղեցու մէջ, այնպէս և այժմ խնամատարութեան հետ զուգընթաց է և բարոյական դատարարակութիւնը: Որքան արեւցողները բարոյապէս ընկածներ վերկում են սարկաւազների և սարկաւազուհիների գործունէութեան շնորհիւ:— Ողորմութիւնը քրիստոնէական է և աւետարանի համապատասխան միայն այն ժամանակ, երբ բարոյական շարժառիթներից է բղխում և բարոյական տեսակէտներով գործադրւում:

Մենք կը կամենայինք, որ այս տեսակետներով ընթանար աղքատների խնամատարութիւնը և մեր մէջ:

Գ. Վ.

ՕՏԱՐ ԵՎԵՂԵՏԻՆՆԵՐ .

ՕՐԹՈՂՈՔՈՍ ԵՎԵՂԵՏԻ .

Եկեղեցական-ճիսական դպրոցներն Ռուսաստանում զնալով աւելի և աւելի ոյժ և ընդարձակ ճաւաղ են ստանում: Այդ դպրոցների ղեկավարութեան և գաստուութեան մէջ կանոնաւորութիւն ու միօրինակութիւն մտցնելու՝ առ հասարակ գործին նոր զարկ տալու նպատակաւ անցեալ տարի մայրաքաղաքներում բացուեցաւ ամառային գասընթաց երկրասեան դպրոցների ուսուցիչների և վարժուհիների համար, և այդ ձևոնարկութիւնն այնպիսի քաւարկով ցոյց տուեց, որ այժմ այդպիսի գասընթացներ կրկնապատիկ յաջողութեամբ բացուել

են բացի Պետերբուրգից և Վասիւայից՝ նաև Կազանում, Կիևում և Խարկովում. իսկ հասարակ դպրոցների ուսուցչաց և վարժուհիների համար՝ գրեթէ իւրաքանչիւր թեմական կեդրոնում: Պետերբուրգում գասընթացը բացուեցաւ հանդիսաւոր կերպով յունիս 25-ին, Սրբ. Պալլադի մետրոպոլի և բազմաթիւ բարձրաստիճան հոգևորական և աշխարհական անձանց ներկայութեամբ: Հոգևոր ձեմարանի հանդիսարանում ս. Սինոդի պրոկուրորի օգնական պ. Սարլէր մի ոգևորուած ճառ կարդաց, որի մէջ ողջունելով ժողովուած ուսուցիչներին և վարժուհիներին՝ պարզեց նոցա գումարման նպատակը, եկեղեց, դպրոցների մեծ դերը ուսու ժողովրդի կրթութեան գործում: * Առանձնապէս կանգ առաւ նա գրիւկադալ սփորեցնող դպրոցների վերայ, որոնց համար ուսուցիչներ և վարժուհիներ են պատրաստուած երկրասեան ուսումնարանները: «Այդ փոքրիկ խուլ գիւղերում բացուող դպրոցները, ասաց ճառախօսը, առանձնապէս թանկագին են ժողովրդի համար, նորա շատ ձախը չեն նստում՝ 30—100 ր. տարեկան, մանուկների ճանապարհը մտ է և գիւղացիներին հաճելի է գրամ տալ այն դպրոցի համար, որ իրենց գիւղումն է գտնուում և ոչ մի որևէ հետու տեղ: Քալով երկրասեան ուսումնարաններին՝ շնոցա կոչումն է եկեղեցական և այլ դպրոցների ամենալաւ աշակերտներին և աշակերտուհիներին ուսուցչութեան համար պատրաստել, առանց կտրելու մայրենի հոգից: Այն ուսուցիչը, որ տանը նստած ձմեռուայ ընթացքում 30—50 ր. ուսմիկ է ստանում՝ գիւղացու ըմբռնմամբ կարգին աշխատանքի տէր է: Ծարուայ մնացած ճասը նա պարուպում է իւր առտնին գործերով, նորա կապը մայրենի գիւղի հետ չի կտրուում: Պարզ գիւղական պայմաններում պատրաստուած լինելով ուսուցչութեան համար՝ նա արհեստական ճանապարհով գէպի քաղաք քաշ չի տրուում և վարակուում այն վատ սովորութիւններով, որ այնպէս դիւրին է իւրացնել քաղաքի վատառողջ միմոլորտի մէջ: Պաշտպանելով ապա եկեղ. դպրոցը նորա դէմ եղած յարձակումների դէմ՝ Սարլէր ասաց. «Վարդիկ, որոնք քիչ ծանօթ են ժողովրդի կրօնական հակման և հոգևոր պէտքերի հետ, մարդիկ՝ որոնք չգիտեն և յաճախ չեն կամենում իմանալ ինչ պայմանների մէջ էր գտնուում մինչև այժմ, ինչ էր կամենում և ինչ է արել եկեղ. դպրոցը՝ ասում են շատ անգամ, թէ նա միակողմանի է թէ նա ցանկալի չէ, որովհետև կզերական նպա-

* Պ. Սարլէր չեւժ պաշտպան լինելով եկեղ. դպրոցների՝ ամառային դասընթացի զյաւտուր կազմակերպողներից մեկն է: Մեծ տիր ունեցանք անցեալ տարի յուլու ևնոս պատ. ճասը այդ դասընթացի փակման հանդիսին: